Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Ներքին Գետաշենի թիվ1միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ «Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ուսուցման գործընթացում»

Վերապատրաստող, մենթոր՝ Մարիամ Սեդրակյան

Ուսուցչի օգնական՝ Մանյակ Երեմյան

Ն. Գետաշեն 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3
1. Ի՞նչ է Ուսումնառության համընդհանուր ձևավորումը----------5
2. Համընդհանուր ձևավորումը և կրթությունը ----------7
3. Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը ----8
4. Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակը և սկզբունքները----
10
5.Համընդհանուր ձևավորում և կրթության առանձնահատուկ պայմանների
կարիքը--14
6. Ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորումը և ներառումը----------15
7.Եզրակացություն----------20
8.Օգտագործված գրականության ցանկ----------23

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը 2014 թվականին համընդհանուր ներառական կրթությունը հռչակեց որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք: Կրթության ոլորտում իրականացվող այս բարեփոխումները ենթադրում էին ինչպես ուսուցման գործընթացում աշակերտներին գիտելիքների տրամադրման, այնպես էլ կրթության գործընթացում կիրառվող մեթոդների և ռազմավարությունների վերանայում, վերակառուցում և արմատական փոփոխություններ: Ուսուցման գործընթացն անհրաժեշտ էր հարստացնել դասավանդման ճկուն և բազմազան մեթոդներով, միևնույն ժամանակ՝ կատարել ուսումնական գործընթացի և միջավայրի հարմարեցում: Այս ամենի լավագույնս իրականացման համար հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչին անհրաժեշտ էր լրացուցիչ աջակցություն, ինչն էլ պատճառ հանդիսացավ հանրակրթության մեջ նոր՝ «ուսուցչի օգնական» հաստիքի ներդրմանը: Ուսուցչի օգնականներին սխալ է դիտարկել որպես հանրակրթական ուսումնական հաստատություններում առկա «լրացուցիչ» մանկավարժական աշխատողներ: Նրանք կարևոր դերակատարում ունեն սովորողների ուսուցման, դաստիարակության, նրանց ինքնակառավարման, անկախության և ինքնագիտակցության տարրերի ձևավորման գործընթացներում:

Ուսուցչի օգնականը հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատող է, ով աջակցություն է ցուցաբերում դասավանդող ուսուցչին՝ հնարավորություն ընդձեռելով նրան առավել արդյունավետ դասեր անցկացնել և ավելի մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության և մասնակցության վրա: Ուսուցչի օգնականը համագործակցում և համաձայնեցնում է իր անելիքները դասավանդող ուսուցչի հետ, օգնում է նրան դասերը սահուն վարելու գործընթացում՝ պահպանելով դասավանդող ուսուցչի կողմից դասարանի համար սահմանված ընդհանուր պահանջները: Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների որակյալ

ուսուցման և աջակցության տրամադրման համար պատասխանատու են դասավանդող ուսուցիչները, ուսուցչի օգնականները, մանկավարժահոգեբանական աջակցության թիմը և ծնողները: Ուսուցչի օգնականները, լինելով մանկավարժահոգեբանական աջակցության թիմի լիարժեք անդամներ, պետք է մասնակցեն բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հետևողական լինեն յուրաքանչյուր սովորողի ԱՈԻՊ-ի շրջանակներում սահմանված նպատակների իրագործմանը:

Ուսուցչի օգնականը կարևոր դերակատարություն ունի նաև դասավանդման ընթացքում ***ուսումնառության համընդհանուր ձևավորման*** գործընթացում:

Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակներում՝ աջակցելով սովորողների ուսումնառությանը՝ ուսուցչի օգնականը.

• պլանավորում է իր աշխատանքները, կատարում գրանցումներ, պատրաստում անհրաժեշտ օժանդակ նյութերը և կազմակերպում դասարանը:

• Հետևում և աջակցում է սովորողներին՝ ապահովելու նրանց անվտանգությունն ու կրթության հասանելիությունը:

• Նպաստում է բոլոր սովորողների ներառմանը, ուսումնառության ընթացքում նրանց ակտիվության և մասնակցության բարձրացմանը:

• Խրախուսում է սովորողներին գործել ինքնուրույն և անկախ, աջակցում ուսուցչի կողմից պահանջված հանձնարարությունների կատարմանը:

• Հետադարձ կապ է տալիս սովորողներին իրենց առաջադիմության և նվաճումների վերաբերյալ:

• Իր գիտելիքներն ու մասնագիտական հմտությունները կիրառում է սովորողներին աջակցելու և ուսումնառության արդյունավետությունը բարձրացնելու համար:

1. Ի՞նչ է Ուսումնառության համընդհանուր ձևավորումը

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին բավականին լայն տարածում է ստացել ուսուցման և դասավանդման մի մոտեցում, որն ընդունված է անվանել Ուսումնառության համընդհանուր ձևավորում՝ ՈՒՀՁ (Universal Design for Learning-UDL): Ուսումնառության համընդհանուր ձևավորումը ուսուցման և դասավանդման գործընթացն ավելի դյուրին դարձնելու միջոց է:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը սովորողների բազմազանությունը ճանաչելու, հարգելու և արժևորելու միջոց է: Այն թույլ է տալիս զարգացնել յուրաքանչյուր սովորողի ներուժն ու բարձր ակնկալիքներ սահմանել ակադեմիական առաջընթացի, որպես անհատ զարգանալու համար՝ անկախ սոցիալական կարգավիճակից, անհատական տարբերություններից, հաշմանդամությունից, սեռից կրոնից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքից և այլ հանգամանքներից:

ՈՒՀՁ-ն հնարավորություն է տալիս պլանավորել դասը՝ հաշվի առնելով կոնկրետ աշակերտների տարբերությունները և առանձնահատկությունները:

Սույն աշխատանքը կատարելով՝ փորձել ենք ցույց տալ ՈՒՀՁ-ի դրական կողմերը և հնարավորությունները, որոնք նպաստում են լիարժեք, ամբողջական և բազմազան դասեր պլանավորելուն՝ հաշվի առնելով սովորողների առանձնահատկությունները:

Կան համընդհանուր ձևավորման բազմաթիվ օրինակներ.

- Ճամփեզրերի կտրվածքները, որոնք ստեղծվել են սայլակով տեղաշարժվողների համար, բայց անհրաժեշտ են անվասայլակներ օգտագործողներին, մանկասայլակով երեխայի հետ զբոսնող ծնողներին, հեծանվորդներին և այլոց:
- Աուդիոգրքերը, որոնք ստեղծվել են տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար, բայց լայնորեն կիրառվում են նաև տեղեկությունը

լսողությամբ ընկալել նախընտրող, կարդալու ժամանակ չունեցող անձանց կողմից:

● Ձայնային ազդանշանով վերելակները, որոնք տեսողության խանգարում ունեցող անձանց նախազգուշացնում են վերելակի ժամանելու մասին, բայց օգտակար են նաև հեռախոսի մեջ խորասուզվածների համար:

Հայաստանում շատ շենքեր պատմական նշանակություն ունեն, ուստի համընդհանուր ձևավորումը այստեղ լուրջ մարտահրավեր է: Շատ դեպքերում ֆիզիկական մատչելիությունը բարելավելու համար շենքերն արդիական տեխնոլոգիաներով ձևափոխվում են: Ստացված արդյունքները միշտ չէ, որ գոհացուցիչ են:

Մատչելիությանը միտված որոշ մոտեցումներ (օրինակ՝ թեքահարթակների ստեղծումը, բազրիքների տեղադրումը և այլն) երբեմն արդյունավետ են, կան նաև ոչ արդյունավետ լուծումներ: Հայաստանում ժամանակակից շենքերի նախագծման ժամանակ համընդհանուր ձևավորման սկզբունքներին հետևելը նոր ձևավորվող մոտեցում է:

Համընդհանուր ձևավորումը և կրթությունը 2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ): Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին:

2. Համընդհանուր ձևավորումը և կրթությունը

2000-ականների սկզբին համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվեցին կրթության ոլորտ՝ վերանվանվելով ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀՁ): Այդ պրակտիկան լայն տարածում գտավ ներառման կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնելու բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին: Դեյվիդ Ռոզը և Անն Մեյերը (2005) ՈՒՀՁ-ն նկարագրել են որպես տեղեկատվությունը աշակերտներին ներկայացնելու, նրանց սովորածը ստուգելու և դասապրոցեսում ներգրավելու բազմազան միջոցների ամբողջություն: ՈՒՀՁ-ի հիմքում այն սկզբունքն է, որ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է, սակայն ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն պետք է ցուցաբերեն: Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, մշակութային ու կրոնական գիտակցության, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկութ-յունների նկատմամբ հարգանքի վրա:

2.1 Տարբերակված դասավանդումը և ուսումնառության համընդհանուր ձևավորումը

ՈՒՀՁ-ն ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ ցանկացած դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող բազմազան աշակերտներ: ՈՒՀՁ-ն հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են նորմալ և ոչ նորմալ: Մանկավարժները ծանոթ են տարբերակված ուսուցման գաղափարին: Այս ընդգրկուն հայեցակարգը ուսուցիչներին հնարավորություն է տալիս առանձին թեմաներ դասավանդելիս,

մարտահրավերը հարմարեցնել սովորողների անհատական առանձնահատկություններին: Այսպես, ուսուցիչը կարող է ավելացնել կամ պակասեցնել բառատետրում գրվող անծանոթ բառերի քանակը, որը աշակերտը պետք է սովորի նախքան նոր դաս անցնելը:Տարբերակված ուսուցումը կարող է լինել ՈՒՀՁ գործընթացի մի մասը: ՈՒՀՁ-ի ուղղությամբ իրականացված հետազոտությունները վկայում են, որ որոշ սովորողների համար յուրացման չափանիշները կամ ակնկալիքները փոփոխելու անհրաժեշտությունը կարող է սակավ լինել, եթե դասավանդելիս կիրառվեն բազմազան նյութեր: Հետազոտությունները ցույց են տվել. որ բազմաթիվ են այն դեպքերը, երբ ուսուցման դժվարություններ ունեցող սովորողների ուսումնառության արդյունավետությունը բարձրացել է, երբ ուսուցիչները հրաժարվել են դասախոսելու և միայն տպագիր նյութերով դասավանդելու ավանդական ձևից: Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք տեսակների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական

Ռազմավարական ուսումնառության համար սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա արձագանքել հասկացությանը: Ոսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանելու միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է նյութը յուրացնելու սովորողի մոտիվացիային: Առանց մոտիվացիայի սովորողների կողմից յուրացումը ավելի մակերեսային է:

3. Ուսումնառության համընդհանուր ձևավորման շրջանակը և սկզբունքները

Ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքները խարսխված են ուսուցման երեք մոտեցումների վրա՝ ճանաչողական, ռազմավարական և հուզական: Ճանաչողական ուսուցումը վերաբերում է սովորողի՝ հասկացություններ ճանաչելու և մտապահելու կարողությանը: Սրան սովորաբար նպաստում է ուսուցչի աշխատանքը կամ տեքստի ընթերցումը:

Ռազմավարական ուսումնառությունը վերաբերում է որոշակի բովանդակությանը, սովորողի՝ հասկացություններին արձագանքելու կարողությանը կամ հմտություններին: Ռազմավարական ուսումնառության ժամանակ սովորողը պետք է ծանոթանա (ճանաչի) և կարողանա հատուկ արձագանքել առաջադիր հարցմանը: Ուսուցման այս տեսակը հաճախ անցկացվում է գրավոր առաջադրանքների կամ դասարանում բանավոր պատասխանների միջոցով: Հուզական յուրացումը վերաբերում է սովորողի՝ նյութը յուրացնելու մոտիվացիային: Առանց մոտիվացիայի՝ սովորողների կողմից յուրացումը մակերեսային է (Մալոն և Լեպպեր, 1987, Այնսքոու, 2008, Մեգա, Ռոնքոնի և ԴեԲենի, 2014):

ՈՒՀԶ-ն ունի երեք հիմնական սկզբունք, որը ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուսումնական գործընթացը պլանավորելու սովորողների կարիքներին համապատասխան: ՈՒՀԶ սկզբունքները համապատասխանում են մի գաղափարախոսության, որը ողջունում է սովորողների տարբերությունները: Ուսուցիչները կարող են բարելավել իրարից տարբեր սովորողների ուսումնառությունը՝ ճանաչողական, ռազմավարական և Ñáõ½³Ï³Ý ուսումնառության բազմազան հնարավորություններ ստեղծելով: Դասավանդման այսօրինակ ճկունությունը բացառում է ուսուցչի կողմից դասախոսություն կարդալու, սովորողների կողմից նշումներ կատարելու (դասախոսությունը գրի առնելու) և վերջապես, անցածի վերաբերյալ քննություններ հանձնելու ավանդական մոտեցումը: Դասախոսության, նշումների, քննության մեթոդը կարող է խոչընդոտ լինել այն սովորողների համար, ովքեր դժվարանում են հասկանալ ուսուցչի խոսքը, գրել կամ մտապահել: Ավանդական մոտեցումը կարող է նաև խոչընդոտներ առաջացնել այն աշակերտների համար, ովքեր ավելի լավ են սովորում փոխներգործուն միջավայրերում կամ փոքր խմբերում: Դասախոսությունները, նշումները և քննությունը կարող են լինել համընդհանուր ձևավորման մասը, սակայն դրանք դասավանդման ժամանակ կիրառվող բազմաթիվ մեթոդներից ընդամենը մի քանիսն են: ՈՒՀԶ-ի երեք սկզբունքները հետևյալն են՝

1. Ճանաչողական ուսուցման օժանդակում՝ նյութը ներկայացնելու բազմազան միջոցների կիրառմամբ:

2. Ռազմավարական ուսումնառության օժանդակում՝ արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորությունների ընձեռմամբ:
3. Հուզական ուսուցման օժանդակում՝ ներգրավման բազմաթիվ միջոցների կիրառմամբ: Կրթական գործընթացի հիմքում երբեմն կարող է ընկնել ՈՒՀԶ ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունք, քանի որ ճկուն մոտեցմամբ կազմակերպված դասերը պահանջում են բազմազան միջոցների կիրառում:
Օրինակ, վերևում նկարագրված՝ գրքի ընթերցումը մոտիվացնող մոտեցումը կարող է դիտարկվել ինչպես հուզական, այնպես էլ ռազմավարական ուսումնառության տարբերակ: Ստորև կներկայացնենք ուսուցիչների կողմից նյութի մատուցման, աշակերտների կողմից նյութի վերարտադրման (արտահայտվելու) և դասապրոցեսում աշակերտների ներգրավման բազմազան մոտեցումների կոնկրետ օրինակներ: Թեման անչափ կարևոր է ինչպես համընդհանուր ներառականության, այնպես էլ լիարժեք և ամբողջական դասեր պլանավորելու, հետաքրքրություն և բազմազանություն ապահովելու առումներով:
«Համընդհանուր ձևավորում» եզրույթն ունի ճարտարապետական ակունքներ և աստիճանաբար տարածվել է կյանքի այլ բնագավառներում ևս՝ իր մեջ ներառելով բոլորի համար հավասար հնարավորություններ ապահովելու, բազմազանությունը հաշվի առնելու և խտրականությունը բացառելու սկզբունքները: Շուրջ 20 տարի է, ինչ համընդհանուր ձևավորման սկզբունքները տեղափոխվել են կրթության ոլորտ: Մոտեցումը կոչվում է ուսումնառության համընդհանուր ձևավորում (ՈՒՀԶ): Այդ փորձառությունը լայն տարածում գտավ ներառական կրթության համատեքստում՝ նպատակ ունենալով կրթական համակարգերը հարմարեցնել բոլոր սովորողների կարիքներին և առանձնահատկություններին: Նովակը ՈՒՀԶ-ի համար ներկայացնում է հետևյալ նպատակները.
•Վերացնում կամ նվազեցնում է ուսուցման խոչընդոտներն ու արգելքները · Ստեղծում է բոլոր սովորողների համար հասանելի ուսումնական ծրագիր և դասեր՝ նպաստելով բոլոր սովորողների իմաստալից մասնակցությանը դասապրոցեսին.

•Օգնում է տարբերակելու ուսուցման բովանդակությունը, գործընթացն ու արդյունքները՝ հաջողության հասնելու հնարավորություն տալով յուրաքանչյուր սովորողին:

Ուսումնառության համընդհանուր ձևավորման շնորհիվ նոր տեղեկությունները ներկայացվում են բազմազան ձևերով՝ միևնույն ժամանակ հնարավորություն տալով սովորողներին արտահայտելու իրենց գիտելիքները տարբեր միջոցներով և եղանակներ: ՈՒՀՁ-ն սկզբունքների կուռ համակարգ է, որի յուրաքանչյուր սկզբունքը կարելի է կիրառել բազմազան միջոցներով ու եղանակներով: Այդ միջոցների և մեթոդների ընտրությունը կախված է ուսուցման միջավայրից, առկա ռեսուրսներից, սովորողների կարիքներից և ուսուցչի ստեղծարարությունից: ՈՒՀՁ գործընթացի ամբողջականության համար կարևոր է հստակ նպատակների սահմանումը, հնարավոր խոչընդոտների և արգելքների կանխատեսումը, ինչպես նաև այդ խոչընդոտները հաղթահարելու նպատակով այլընտրանքներ ձևավորելը: ՈՒՀՁ-ի հիմքում այն սկզբունքն է, որ նյութի բովանդակությունը ակադեմիական փորձառության ամենակարևոր մասն է, սակայն ուսուցիչները սովորողներին դասապրոցեսում ներգրավելու համար բազմազան միջոցներ կիրառելու վարպետություն պետք է ցուցաբերեն: Այս մոտեցումն ուղղված է ամբողջ դասարանին և հիմնված է աշակերտների անհատականության, կենսափորձի, սովորելու ոճի, հաշմանդամության փաստի և լեզվական ընդունակությունների համար դասավանդման արդյունավետ ձևեր գտնելու և աշակերտների առանձնահատկությունների նկատմամբ հարգանքի վրա:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը մարդու սովորելու կարողության գիտական հիմքերի վրա կազմված գործիք է, որը հնարավորություն է տալիս կատարելագործել և առավելագույնս հասանելի դարձնել ուսուցման գործընթացը բոլորի համար:

3.1Համընդհանուր ձևավորում և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը

Ներառման գործում ՈՒԸՄԿ-ի կարևոր ներդրումներից մեկը մանկավարժի ուշադրության կենտրոնացումն է սովորողների բազմատարրության վրա: Հայաստանում մասնագետների կողմից քայլեր են արվում հաշմանդամության ընկալումը վերաիմաստավորելու համար: Մանկական գրականության միջոցով մարդկանց տարբերությունների ներկայացման (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016) և ուսուցիչների վերապատրաստման նոր մոտեցումների մշակման շնորհիվ խորանում են պատկերացումներն ու տարբերությունների ընդունումը մարդկային բազմազանության մասին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը գնահատելիս սովորողի խնդիրները մատնանշելու փոխարեն առանձնացվում ու մատնանշվում է նրա ներուժը: «Խորհրդային տարիներին ենթադրվում էր, որ բոլոր մարդիկ «իրար նման են», կատարյալ, գեղեցիկ, առանց խնդիրների: Բոլոր նրանք, ովքեր չէին բավարարում այս չափանիշներին (ունեին տեսողական, լսողական, ֆիզիկական, մտավոր, նույնիսկ խոսքի և հաղորդակցման խնդիրներ), մեծանում էին հատուկ (գիշերօթիկ) հաստատություններում, իրենց ընտանիքներից ու հասարակությունից առանձնացված» (Ավագյան, Բաղդասարյան և Սարգսյան, 2016): Այսօր Հայաստանում ավելի ու ավելի է տարածվում բազմազանության նկատմամբ հանդուրժողականությունը և այն փաստի ընդունումը, որ մարդիկ տարբեր կերպ են ընկալում ու իմաստավորում տեղեկատվությունը, ճանաչում պատկերները. նրանց մեջ նյութի նկատմամբ հետաքրքրություն առաջանում է ուսումնառության որոշակի մոտեցման կիրառման դեպքում (Վիգոտսկի, 1962): ՈՒԸՄԿ-ն ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ յուրաքանչյուր դպրոցում սովորում են կրթության ամենատարբեր պայմանների կարիքներ ունեցող աշակերտներ: ՈՒԸՄԿ-ն հրաժարվում է այն տեսակետից, որ սովորողները լինում են «նորմալ» և «ոչ նորմալ» կամ սովորական և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (Ռոզ և Մեյեր, 2005):

3.2 Ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորումը և ներառումը

Դասարանում համընդհանուր ձևավորման գործածումը միտված է ներառական գործընթացի բարելավմանը: Համընդհանուր ձևավորումն ուղղված է սովորողների՝ որպես «սովորական» և «առանձնահատուկ» երեխաների տարբերակումը վերացնելուն՝ ելնելով այն հանգամանքից, որ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է սովորում և բազմազան մոտեցումների կիրառումը կօգնի բոլոր սովորողներին: Միաժամանակ ուսումնառության ընդհանուր միջավայրի ձևավորումն ավելի խոր իմաստ ունի, քան պարզապես «լավ դասավանդումը»: Ըստ Էդիբըրնի (2010)՝ ուսումնառության ընդհանուր միջավայրի ձևավորումն ուսուցիչների կողմից բազմազանության արժևորման փիլիսոփայական դիրքորոշման և միաժամանակ անընդմեջ սովորելու և կատարելագործվելու անհրաժեշտության ընդունումն է: Հեշտ չէ ունենալ ուսումնառության ընդհանուր միջավայր: Բայց երբ ուսուցիչները հիմ-նավորապես ընդունում են դասարաններում տարբեր ունակությունների տեր սովորողների ներկայությունը և դասագործընթացը կազմակերպում են այնպես, որ ներգրավեն բոլոր սովորողներին, ՈՒԸՄԿ-ն կատարելագործվում է: Գոյություն ունեն դասավանդման ամենատարբեր մոտեցումներ, որոնք ուսուցիչները կարող են օգտագործել դասարանում բազմազանության խթանման համար: Այս մոտեցումներից մի քանիսը նկարագրված են ստորև: Ուսումնական տարվա ընթացքում իրենց սովորողներին ճանաչելով ու օգտվելով աշակերտներին նկարագրող տեղեկատվական աղբյուրներից՝ ուսուցիչները կարող են դասավանդումը հարմարեցնել իրենց սովորողների կարիքներին: Միևնույն ժամանակ ուսումնառության միջավայրի ընդհանուր ձևավորման գաղափարական հիմքը համահունչ է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի (ՄԱԿ, 2006) առավել լայն փիլիսոփայությանը: Կոնվենցիան առաջադրում է հաշմանդամություն ունեցող անձանց օժանդակության ավելի լայն հնարավորություններ ներառական ուսուցման միջոցով, որը մանկավարժներից պահանջում է ապահովել մատչելիություն բոլորի համար: Ըստ կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան

միջոցներ, որպեսզի մյուսների հետ հավասար հիմունքներով նրանց համար ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը), ինչպես նաև այլ պայմանների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք տրամադրվում են հանրությանը թե՛ քաղաքներում, թե՛գյուղական վայրերում: Այս միջոցները ներառում են խոչընդոտների և արգելքների բացահայտումը և վերացումը: Գործնականում տարատեսակ միջոցների կիրառմամբ նյութ ներկայացնելը, արտահայտվելու համար բազմաթիվ հնարավորություններ ընձեռելը և սովորողի համար ներգրավվածության բազմազան միջոցների տրամադրումը կարող են տարբեր լինել: Այսպես, դա կարող է նշանակել, ընդհանուր առմամբ, բազմազան մոտեցումների կիրառում նյութը ներկայացնելիս, բազմազան հնարավորությունների ընձեռում աշակերտներին սովորածը վերարտադրելիս և դասագործընթացում ներգրավվելիս: Օրինակ՝ ուսուցիչը կարող է ցուցադրել տողատակերով տեսահոլովակ, որպեսզի սովորողները միաժամանակ կարողանան կարդալ տեսահոլովակում ներկայացվող տեղեկատվությանը վերաբերող տեքստը: Սա կարելի է համարել լսողության խանգարում ունեցող սովորողի պայմանների բարելավում, սակայն բովանդակությունը հասկանալի դարձնելու առումով ճկուն մոտեցում է բոլոր սովորողների համար: Ստորև ներկայացված են ուսուցիչների կողմից դասարաններում ճկունություն հանդես բերելու լրացուցիչ օրինակներ:

Անհատական ուսումնական պլանները և համընդհանուր ձևավորումը Հայաստանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն ունեն անհատական ուսումնական պլաններ: Անհատական ուսումնական պլաններն ունեն երեք հիմնական նպատակ՝ ապահովել հասանելիություն, մասնակցություն և առաջընթաց: Այս եզրույթներից յուրաքանչյուրին կանդրադառնանք ստորև՝ անհատական ուսումնական պլանների և ուսումնառության ընդհանրական միջավայրի ձևավորման համատեքստում: Հասանելիություն: Հաշմանդամություն ունեցող սովորողները պատմականորեն հաճախել են հատուկ դպրոցներ, որպեսզի ստանան նաև թերապևտիկ ծառայություններ Հաշմանդամություն ունեցող սովորողները կրթություն էին ստանում առանձնացված հաստատություններում՝

հանրակրթական դպրոցներից ու հասարակությունից անջատ: Պարտավորվելով իրականացնել ներառական կրթություն՝ Հայաստանը փոխեց մոտեցումը և ծառայությունների վրա հիմնված մոդելից անցավ իրավունքահեն մոդելի: Սա նշանակում է, որ շարունակվում է ծառայությունների մատուցումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, բայց ավելի մեծ դեր է հատկացվում երեխաների՝ իրենց համայնքում գտնվող դպրոցներում հավասար հիմունքներով կրթություն ստանալու իրավունքին: Այս իրավունքն ամրագրված է ԱՈԻՊ-ի առաջին հիմնական նպատակի՝ հասանելիության մեջ: Երբ հաշմանդամություն ունեցող սովորողները հատուկ դպրոցներից տեղափոխվում են հանրակրթական դպրոցներ, ուսուցիչները պատասխանատվություն են ստանձնում դասավանդվող նյութի հասանելիությունն ապահովելու համար: Աշակերտի համար հասանելիությունն ապահովելիս կարևոր է տարբերել մատուցման մատչելիությունը նպատակային հմտությունների հասանելի լինելուց (Կեթթլեր, Գլովեր, Ալբերս և Ֆինեյ-Կեթթլեր, 2014): Օրինակ՝ ուսուցիչը ներկայացնում է նյութ պատմությունից կամ մաթեմատիկայից: Պատմության դեպքում նպատակային հմտությունն այն է, որ աշակերտը կարողանա յուրացնել պատմության կարևոր տարեթվերը: Մաթեմատիկայի դեպքում նպատակային հմտությունը կարող է լինել երկնիշ թվերի բազմապատկումը: Սակայն նշված նպատակային հմտությունները կարող են հասանելի չլինել աշակերտի համար: Կարող է թվալ, որ եթե աշակերտը զարգացման առանձնահատկության պատճառով դժվարանում է հասկանալ պատմության դասանյութի բովանդակությունը կամ թվեր գրել, նա երբեք չի հասնի դասի բուն նպատակին: Սակայն ուսուցման համապիտանի ձևավորման մոտեցումներ կիրառող ուսուցիչը նպատակային հմտությունը կձևավորի բազմազան ձևերի կիրառման միջոցով: Օրինակ՝ պատմության դասաժամին տեղեկատվությունը կարող է ներկայացվել բանավոր, տեսահոլովակի կամ քննարկման միջոցով: Մաթեմատիկայի դասին խնդիր լուծելու համար ուսուցիչը կարող է թույլատրել աշակերտին օգտվել տեխնոլոգիական տարբեր միջոցների կամ եռաչափ մոդելներից (օրինակ՝ խորանարդիկներից): Երկու դեպքում էլ ուսուցիչը կարող է օգտվել համընդհանուր ձևավորման գաղափարներից, օգնել աշակերտներին

տիրապետելու նպատակային հմտություններին: Մասնակցություն: Հասանելիության հետ մեկտեղ բոլոր սովորողներն իրավունք ունեն ակտիվ մասնակցություն ցուցաբերելու դասերին: Այդպիսի ակտիվ մասնակցության համար ուսուցիչները դասը պետք է պլանավորեն հատուկ ձևով՝ օգտվելով համալիր ձևավորման սկզբունքներից: Օրինակ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտը կարող է ունենալ խոսքի խանգարում, հետևաբար համադասարանցու հետ երկխոսություն պահանջող աշխատանքի տարբերակը կարող է խոչընդոտ լինել: Համընդհանուր ձևավորման սկզբունքներին համապատասխան կազմակերպված դասագործընթացում համադասարանցու հետ հանձնարարության կատարումը կարող է լինել մասնակցություն ապահովելու ձևերից մեկը, բայց ուսուցիչը կարող է նաև կիրառել այլ ռազմավարություն, օրինակ՝ տեղեկույթ հաղորդելու համար օգտագործել նկարներ, բոլոր սովորողներին, իրար հետ հաղորդակցվելու համար, սովորեցնել օգտվել տեխնոլոգիական միջոցներից կամ հարցերին պատասխանելու համար աշակերտներին սովորեցնել ժեստեր: Առաջընթաց: Ներառումն ավելի խոր իմաստ ունի, քան կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների՝ հանրակրթական դպրոցում ներկայության խրախուսումը: Մանկավարժները պետք է լինեն առաջադեմ և մեծ ակնկալիքներ ունենան բոլոր սովորողներից: Դպրոցները պետք է հաջողություններ սպասեն բոլոր սովորողներից: Ներառական և հատուկ կրթության մոդելները տարբերվում են սովորողի գնահատման ձևով: Եթե հատուկ կրթության մոդելի դեպքում սովորողն առաջընթաց չի ցուցաբերում, ենթադրվում է, որ դա նրա առանձնահատկության հետևանքն է: Ներառական միջավայրում նման դեպքերում ուսուցիչները և վարչական աշխատողները վերանայում են համակարգը, դպրոցի և դասարանի պայմանները՝ սովորողների ուսում-նառության խոչընդոտները վերացնելու համար: Վերանայումից հետո կազմվում է սովորողի առաջընթացին օժանդակելու գործողությունների պլան: Այդ պլանը կարող է ներառել հավելյալ աջակցություն: Ուսուցիչները նախևառաջ մտածում են՝ արդյոք այդ խոչընդոտը դասարանի միջավայրն է և իրենք իրենց հարց են տալիս.

1. Առկա՞ է նպատակային հմտություններ սովորեցնելու համար անհրաժեշտ հասանելիություն, և հնարավո՞ր է արդյոք դա փոխել:
2. Արդյոք փորձ կատարվե՞լ է նյութը մատուցել բազմազան ձևերով՝ դրանք լավագույնս համապատասխանեցնելով աշակերտների սովորելու առանձնահատկությանը:
3. Կա՞ն ավելի լավ ձևեր, որոնցով կարելի է օգնել սովորողին՝ դրսևորելու իր սովորածը:
4. Արդյոք դասարանում կա՞ն սովորողի ուսումը խոչընդոտող պայմաններ (օրինակ՝ ձանձրալի մթնոլորտ, աղոտ լուսավորություն, ճնշումներ դասընկերների կողմից, անհարմար դիրք):

Համընդհանուր ձևավորումը, ինչպես անունը հուշում է, ուսուցման նպաստավոր միջավայր ստեղծելն է բոլորի համար: Այն կոչված է բարելավելու ներառականությունը՝ ուսուցչի վրա դնելով դասավանդման և ուսումնական գործընթացի կազմակերպման պարտականությունները: Այս մոտեցումն արմատապես տարբերվում է այլ մոտեցումներից, որոնք սովորողների ձախողումները դպրոցում պայմանավորում են նրանց խնդիրներով: Ուսում-նառության համընդհանուր ձևավորում կիրառելիս հաճախ հաշվի են առնվում յուրաքանչյուր սովորողի կրթական կարիքները: Այս կերպ ուսուցիչները կարող են հասնել սովորողների մի մասի անհատական ուսուցման պլաններում սահմանված նպատակներին, ինչպես նաև բավարարել առանց այդ ԱՈԻՊ-ի ուսումնառող սովորողների անհատական ուսումնական կարիքները: Բոլոր դեպքերում նյութը ներկայացնելու, յուրացրածը արտահայտելու և ներգրավումն ապահովելու համար կիրառվող մոտեցումների բազմազանությունը ուսուցիչներին հնարավորություն կտան դասերը կազմակերպելու այնպես, որ դրանք համապատասխանեն բոլոր աշակերտների կարիքներին՝ անկախ կրթական կարիքի ճանաչված լինելու փաստից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրման արդյունքում, եկանք այն եզրակացության, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաներն առանձնահատուկ են, կրթությունը պետք է կազմակերպել՝ հիմքում ընդունելով բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքը: Սա հնարավոր է կազմակերպել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքների ու մոտեցումների կիրառմամբ՝ ապահովելով սովորողների ուսուցման գործընթացին ակտիվ մասնակցության բազմազան միջոցներ:

Ուսումնառության համընդհանուր ձևավորումը՝ ՈՒՀՁ (Universal design for learning-UDL) ուսումնառությունը խթանող և աջակցող սկզբունքների համակարգ է, որի դերը դասավանդման պլանավորման, ուսումնական ծրագրերի ձևավորման փուլում ուսուցման բոլոր խոչընդոտների և արգելքների քարտեզագրումն է և այդ հիմնախնդիրներին լուծումներ առաջարկելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բոլոր երեխաներն առանձնահատուկ են, կրթությունը պետք է կազմակերպել՝ հիմքում ընդունելով բազմազանության, այլ ոչ թե միանմանության սկզբունքը: Սա հնարավոր է կազմակերպել ուսումնառության համընդհանուր ձևավորման սկզբունքների ու մոտեցումների կիրառմամբ՝ ապահովելով սովորողների ուսուցման գործընթացին ակտիվ մասնակցության բազմազան միջոցներ: Ուսուցման գործընթացում պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն տրամադրված նյութի

քանակին, ընկալման մակարդակին, այլև՝ մատուցման: տարբերակներին: Բոլոր երեխաները, առանց բացառության, կարող են սովորել, սակայն, նյութն առավել հեշտ ընկալելու և սովորելու նրանց ոճերը տարբեր են:

Ուսուցման գործընթացն իրականացնելուց առաջ պետք է հստակ պատկերացում կազմել յուրաքանչյուր սովորողի ուսումնառության, ինչպես նաև դասավանդման ոճերի մասին, և դասարանի աշխատանքային տարածքը նախապես կազմակերպել՝ համապատասխանեցնելով այդ ամենին: Դա հնարավորություն կտա ուսուցչին, ուսուցչի օգնականին և սովորողներին ակտիվ և արդյունավետ փոխազդել դասաժամի ընթացքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ադամյան Հ.Ա., Մարգարյան Լ.Հ., Մանկավարժահոգեբանական գնահատման և աջակցության գործընթացների կազմակերպումն աջակցության կենտրոններում, Ձեռնարկ, Երևան, 2019
2. Առաքելյան Ս., Խառը տիպի ուսուցման դասընթացի նախագծման առանձնահատկությունները, Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի: Մանկավարժություն և հասարակական գիտություններ: 2 (33) – Երևան, Լինգվա, 2015, 260 էջ, ՀՏԴ 378.175/371.397
3. Դավթյան Մ., Խաչատրյան Մ., Դասավանդման ժամանակակից մոտեցումներ ու մեթոդներ, Երևան, 2019
4. Դավթյան Ս.Ռ., Տեսողության խանգարում ունեցող նախադպրոցականների տարածական կողմնորոշման կարողությունների ձևավորման և զարգացման միջոցներն ընտանիքում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Նահապետ» հրատարակչություն, 2018
5. Ենոքյան Տ.Վ., Կրտսեր դպրոցականների հաղորդակցական կարողությունների ձևավորմանն ուղղված մեթոդների և միջոցների կարևորությունը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, §Գիտական տեղեկագիր, № 1-2 (34-35), Երևան, 2018

6. Զադոյան Ա.Մ., Մանկավարժական խորհրդատվությունը որպես ուսուցչի օգնականի գործառույթների իրականացման գիտամեթոդական ուղեցույց: Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, 2019, ՀՏԴ 036
7. Թադևոսյան Ս., «Անհատական ուսուցման պլանի մշակման» մեթոդական ուղեցույց-ձեռնարկ, Երևան, 2016

Դասի նպատակը Դասի ավարտին մասնակիցները կկարողանան . . .	**Կարևոր դրույթները** Բանալի հասկացությունները, անվանումներ, որոնք մասնակիցը պետք է սովորի	**Անհրաժեշտ նյութերը, պարագաներ** Ի՞նչ է անհրաժեշտ դասի համար-դիդակտիկ պարագաներ դասի ամեն փուլի համար:
• վերլուծել և հասկանալ, թե ուսուցման որ ռազմավարություններն են կիրառելի և արդյունավետ իր համար, զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները:		• համակարգիչ, սահիկաշար, լեգոներ, խորանարդիկներ, մոդելներ, վանկային, տառային աղյուսակներ, ինտելեկտուալ, զարգացնող բառախաղեր՝ անագրամմաներ

Դասարանի, դասի նախապատրաստում
Ի՞նչ պետք է լինի դասարանում, սեղանին երբ մասնակիցները մինչեւ աշակերտների դասարան մտնելը

թղթեր, սոսինձ, մկրատ, ներկեր կամ հատուկ պարագաներ, անձեռոցիկներ, լեգոներ, խորանարդիկներ, մոդելներ, վանկային, տառային աղյուսակներ, գրիչ, մատիտ և այլն

Գնատահում
Նկարագրեք՝ ինչպե՞ս պետք է չափեք աշակերտների առաջընթացը կամ դասի նպատակին հասնելը (առաջադրանք)

- Կրկնեցեցինք դասի հիմնական կետերը սովորողների հետ, համոզվելու համար, որ ընկալել են դասի նյութը: Հարցեր տվեցի աշակերտներին ստուգելու համար՝ արդյո՞ք հասկացել են

Դասի սկիզբ - *5 րոպե*	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Վարքային եւ այլ սպասելիքների ներկայացում 2. Ի՞նչ են սովորելու աշակերտները (դասի թեման եւ նպատակը) 3. Կարեւոր դրույթների ու բառապաշարի ներկայացում, որոնք օգտագործվելու են դասի ժամանակ 4. Ինչպե՞ս է դա կապվում նրանց նախկին գիտելիքների հետ: 5. Ինչպե՞ս է կապվում իրական կյանքի հետ: Ինչու՞ է դա կարևոր: 6. Ի՞նչ են պատրաստվում անել դասին: 7. Խթանիչ վարժություն (եթե կա) **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** - (1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար - (3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ - (3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը - (7.1) Բավարար հնարավորություններ անհատական ընտրություն կատարելու և ինքնուրույնության համար -(7.2) Ուսումնառությունը կապել	● Օգտագործեցի խաղային հնարներ և միջոցներ սովորողի հետաքրքրությունը և շահագրգռվածությունը բարձրացնելու համար ● Սովորեցրեցի մտապահելու ռազմավարություններ, ինչպես օրինակ՝ կրկին հարցնել, հստակեցնել, պահանջել ավելի կոնկրետ, ավելի մանրամասն տեղեկություններ ●Սահմանեցի հստակ օրակարգ և գործողությունների պլան՝ օգտագործելով սովորողին հասանելի և հասկանալի միջոցներ (օրինակ՝ գործողությունները հուշող նկարներ, բառեր, սմարթ հեռախոսներ, անհատական օրագրեր), դա հնարավորություն է տալիս նրանց նախապես տեղեկացված լինել գործողությունների պլանին և ավելի հեշտ հարմարվել սպասվող փոփոխություններին, ինչպիսիք են, օրինակ՝ միջավայրի, ուսուցիչների կամ առարկայական դասաժամերի փոփոխումը

սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը - (8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը - (9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	
Նոր Նյութի մատուցում - *15 րոպե*	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ են սովորում աշակերտները: 2. Ինչպե՞ս են սովորում այդ նյութը: 3. Արդյո՞ք նոր նյութը հանգում է կարևոր դրույթներին եւ տանում դեպի դասի նպատակը: **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(2.3) Պարզեցնել մաթեմատիկական արտահայտությունները, բանաձևերը -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -(3.1) Ակտիվացնել արդեն առկա գիտելիքը կամ ապահովել անհարաժեշտ տեղեկատվություն՝ նոր նյութ մատուցելուց առաջ -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր	Շրջակա միջավայրի պահպանություն Ջրում են ծաղիկները, կեր թողնում թռչունների համար, իմ հսկողությամբ ինքնուրույն հաղթահարելով դժվարությունները և զարգացնելով անձնային որակները

հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(5.1) Կիրառել հաղորդակցության տարբեր/բազմաթիվ միջոցներ -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը	
Ուղղղորդված **աշխատանք-** *15 րոպե*	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ի՞նչ հնարավորություն է տրվում աշակերտներին աշխատելու: 2. Արդյո՞ք այդ աշխատանքը վերահսկվում, աշակերտներին օգնություն է տրվում : 3. Արդյո՞ք ներկայացված նոր նյութը պատրաստել է աշակերտներին աշխատելու 4. Կան սպասելիքներ լսելու, մասնակցելու մյուսներին օգնելու: 5. Արդյո՞ք կատարվող գործողությունները կազմակերպված են: **ՈՒՀՁ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	

-(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(4.1) Տարբերակել ֆիզիկական միջավայրում ուղղորդվելու և պատասխանելու մեթոդները -(6.2) Աջակցել պլանավորման ու ռազմավարությունների զարգացման գործընթացին -(6.3) Դյուրացնել և օժանդակել տեղեկատվության և ռեսուրսների ղեկավարումը -(7.2) Ուսումնառությունը կապել սովորողների իրականության, և իրական կյանքի հետ՝ ընդգծելով սովորելու արժեքն ու կարևորությունը -(8.3) Խրախուսել համագործակցությունն ու հաղորդակցությունը -(8.4) Տրամադրել դեպի կատարյալն ու ավելի լավն ուղղորդող հետադարձ կապ	
Ինքնուրույն **աշխատանք -** *5 րոպե*	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար 1. Ինչպե՞ս է ուսուցիչը հնարավորություն տալիս աշակերտներին ինքնուրույն աշխատելու: 2. Ի՞նչ վարժություն, առաջադրանք	Կատարել անհատական աշխատանքներ, համակարգչի միջոցով ինքնուրույն փնտրելով լրացուցիչ ինֆորմացիա

է պատրաստված աշակերտների ինքնուրույն աշխատանքի համար **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(1.2)/(1.3) Ապահովել այլընտրանքներ լսողական եւ տեսողական տեղեկատվության համար -(2.1)/(2.2) **Պարզեցնել բառապաշարն ու սիմվոլները,** շարահյուսությունն ու լեզվական կառույցները -(2.5) Ցուցադրել տեղեկությունը բազմազան միջոցներով -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(3.3) Ուղղորդեք տեղեկատվության գործառնության, մտապատկերման և այն հմտորեն կիրառելու գործունեությունը -(9.1) Խթանել մոտիվացիան բարձր ակնկալիքների և հավատալիքների միջոցով -(9.2) Զարգացնել դժվարություններն ինքնուրույն հաղթահարելու անձնային որակներն ու ռազմավարությունները	
Դասի ամփոփում- *5 րոպե*	
Ուղղորդումներ պլանավորելու համար եւ **ՈՒՀԶ (UDL) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ**	Վարողի գործողությունների նկարագրություն, հրահանգներ, հարցեր
Ուղղորդումներ պլանավորելու համար **1. Ինչպե՞ս է կատարվում անդրադարձ կարեւոր դրույթներին ու դասի նպատակներին**	Ցուցադրում եմ գործողությունները հուշող նկարներ, բառեր, սմարթ հեռախոսներ, անհատական օրագրեր և այլն

2. **Ինչպես է կատարվում քննարկում սովորածի կարեւորության եւ հետագա կիրառելիության մասին** 3. **Ի՞նչ անդրադարձ է կատարվում աշակերտներիի վարքին եւ կատարողականին (գնահատում/ խրախուսանք), ինչպե՞ս է դասին հետադարձ կապ տրվում** **ՈՒՀՁ (ՍԴԼ) ՈՒՂԵՆԻՇՆԵՐ** -(3.2) Ընդգծել կաղապարները, կարևոր հասկացությունները, դրանց միջև գոյություն ունեցող կապերը -(5.2) Օգտագործել ուսուցման վերջնարդյունքի ձեւավորման եւ ստեղծման բազմապիսի միջոցներ -(6.4) Զարգացնել առաջընթացի մշտադիտարկման կարողությունը -(8.1) Ընդգծել և տեսանելի դարձնել նպատակների և վերջնարդյունքների կարևորությունը -(9.3) Զարգացնել ինքնագնահատման ու վերլուծական ինքնանդրադարձ կատարելու ունակությունները	